ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2014թ. ապրիլի 14 -ին կայացրած նիստի

Նիստի մասնակիցներ՝ հանձնաժողովի 3 անդամները:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրելու խնդրանքով ՀՀ Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի նախագահ Մելսիկ Հարությունյան:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց

Գետափ համայնքի բնակիչ Երեմ Հովհաննիսյանի դիմումն ուղղված ՀՀ Վայոց ձորի մարզպետին:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Ելնելով բժշկական ցուցումներից և նրա ընտանիքի սոցիալապես անապահով վիճակից Երեմ Հովհաննիսյանի բուժումը պետական պատվերի շրջանակներում իրականացնելու համար նախապատրաստել ՀՀ Վայոց ձորի մարզպետի հանձնարարականն ուղղված <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրինությանը:

Հանձնաժողովի Նախագահ՝ Մ. Հարությունյան

Քարտուղար՝ Ս.Շահբազյան